ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-------» --------- 2010թ. N---Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Երևան քաղաքի ավագանու երրորդ նստաշրջանի հինգերորդ նիստի օրակարգը /կցվում է/։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Օրակարգի նախագծի հաստատում:
2. Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը նոր խմբագրությամբ ընդունելու մասին:
3. Երևանի Բուզանդի փողոց թիվ 33/2 հասցեի էլեկտրաենթակայանը և կաթսայատունն անհատույց օգտագործման հանձնելու մասին:
4. Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից 2009 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին:
5. Գումար հատկացնելու մասին:
6. Երևանի վարչական շրջանի ղեկավարի և նրա աշխատակազմի գործունեության կարգը սահմանելու մասին:
7. Մի շարք համայնքային առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների անվանափոխության մասին:
8. Երևան քաղաքի խորհրդանիշերի պարտադիր օգտագործման այլ դեպքերը և կարգը սահմանելու մասին:
9. Երևանի քաղաքապետի մի շարք որոշումներին համաձայնություն տալու մասին:
10. «Արմենիա Ջեստիոնե» փակ բաժնետիրական ընկերության վարձակալությանը գույք հանձնելու մասին:
11. Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը օտարելու մասին:
12. Երևանի քաղաքապետի 2010 թվականի մայիսի 5-ի հ.1784-Ա և հունիսի 3-ի հ.2149-Ա որոշումները, «Երևանի սպորտ կոմիտե» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը և «Երևանի սպորտ կոմիտե» համայնքային ոչ առևտրային կազմակերպության թվով 25 հիմնարկների օրինակելի կանոնադրությունը, աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ